

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԾ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 11

Է. Ա. ԳԵՐԱՄԻՄՅԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԹՇՉՈՒՆՆԵՐԻ
ԿԵՐԱԿՐՈՒՄՆ ՈՒ ԽՆԱՄՔԸ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԾ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1948

636.5.083/4

11688

4-49

9th passenger f. u.

9th passenger passenger

4th passenger passenger

3n.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 11

636.5.083

գ-49

Է. Ա. ԳԵՐԱՍԻՄՅԱՆ

ԱՍՈՒԳՎԱՆ Հ 1961 թ.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ
ԿԵՐԱԿՐՈՒՄՆ ՈՒ ԽՆԱՄՔԸ

44684

4/19215



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՄԱԿՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1948

Յպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
Նախագահության կարգադրությամբ:
Հայկական ՍՍՌ ԳԱ, Պրեզիդենտ Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Յ. А. ГЕРАСИМЯН
КОРМЛЕНИЕ И СОДЕРЖАНИЕ
СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫХ ПТИЦ
(На армянском языке)
Изд. АН Арм. ССР, Ереван, 1946 г.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսական թռչունները տալիս են շատ օքտակաց մթերքներ՝ համեղ և մնադարար միս, մանուկների և հիվանդների համար առանձնահստուկ դիետիկ նշանակություն ունեցող ապի-տակ միս, մեծ քանակությամբ ձու, փետուր, բմբուր Աղը ուժեղ ազդային պարարտանյութ է:

Հափի ձուն բարձր սննդարար արժեք ունեցող մթերք է, որն իր կեղեի շնորհիվ երկար կարող է պահպել թարմ վիճակում: Ձուն գործ է ածվում նաև ներկեր պատրաստելիս և կաշվի արդյունաբերության մեջ:

Թռչուններ պահելը համեմատաբար հեշտ է, որովհետև նրանք կարող են օգտագործել ամեն տեսակի կերեր և մնանդարդյունաբերության զանազան մեւցորդները: Բացի դրանից նրանք շատ արագ են բազմանում ու վաղաժամ են, և այդ տեսակետից շատ արժեքավոր են տնտեսության համար:

Մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեզուլտիան թռչնաբուծությունը մեզ մոտ հետամիաց վիճակում էր: Թռչուններին պահում էին մյուս կենդանիների հետ միասին՝ մոլթ, կեղատու, նեղ գոմերում և վատ էին կերակրում: Բնականաբար հավերի ձվատվությունը շատ ցածր էր, տարեկան հաղիվ հասնում էր 40—50 ձվի:

Սովետական կառավարությունը մեծ ուշադրությունը շատ ածված նույն թռչնաբուծության զարդացման վրա: Բոլոր կոլխոզներում կազմակերպված են թռչնաբուծական ապրանքային ֆերմաներ, որոնցից լավագույնները մեծ նվաճումներ ունեն թռչունների ձվատվությունը բարձրացնելու գործում:

Մինչև Հայրենական Պատերազմը Սովետական Միությունում կար 216 միլիոն դլուխ գյուղատնտեսական թռչուն, որից 55 միլիոն՝ ցեղական, իսկ ցարական Ռուսաստանում կար միայն 16 հազար ցեղական թռչուն:

Հավերի ձվատվությունը տարեց-տարի աճում է: Եթե 1938 թվին տարեկան միջին ձվատվությունը կազմում էր 60 ձու, ապա 1944 թվին կոլխոզներում արդեն հասնում էր 144 ձվի:

Լավագույն թոչնաբուծական տնտեսություններում ձվատվությունը ավելի բարձր է, օրինակ՝ Մոսկվայի մոտ, «Գորկի 2-րդ» սովխոզում 51,5 հազար հավից միջին թվով ստացված է 174.-ական ձու, Ղրիմի «Կրասնիյ» սովխոզում 86,7 հազար հավից ստացվել է 13,8 միլիոն ձու, կամ յուրաքանչյուրից 160 հատ:

Մոտավորապես նույն ձվատվությունը կար Բըռտցիվոյի թոչնագործարանում: Այդ գործարանում նույն տարվա աքաղաղներին և 3 տարեկանից բարձր ծեր հավերին գիրացնում են, կիրառական մեքենայական կերակրում: Հավին բռնում են ձեռքի վրա, և հատուկ մեքենան ոտքով շարժելով, նրա քուչը միանգամից լցնում են կերպվ, աշխատելով, որ թոչունը, որքան կարելի է, շատ կեր ընդունի: Գիրացած թոչուններին գործարանի տարրերը բաժիններում մորթում են, մաքրում, սառեցնում, հատուկ ձեռք փաթթում և ուղարկում վաճառման կետերը:

Այդ խոշոր տնտեսությունները չափազանց ինտենսիվ ձեռք են կազմակերպված: Հավանոցները 3 հարկանի են ու շատ երկար, իսկ մեջը հավերը տեղադրված են 3—4 հարկանի խմբական կամ անհատական վանդակներում, թոչունները չեն օգտվում արոտից, դուրս չեն թողնվում. բայց շատ կանոնավոր են կերակրվում, ապահովվում են արհեստական արևով (կվարցի լամպաներ) և բոլոր անհամբեշտ պայմաններով: Հավերը նույն վանդակներում ձու են ածում, նրանց թուխս չեն նստեցնում և նուտերն ստանում են տնտեսության ինկուբատորներում:

Սովետական Միությունում ինկուբացիայի միջոցով ճռւտեր ստանալը մեծ ծավալ է ընդունել, կազմակերպվել են բազմաթիվ ռայոնական ինկուբատորացին թոչնաբուծական կայաններ, որի շնորհիվ թոչունների զլիաքանակի բազմացումը չափանցանց արագացել և հեշտացել է:

Հավաբուծությունից գեռ շատ հետ է մնում ջրային թոչունների և հնդկահավերի զլիաքանակի աճը, չնայած, որ կան նրանց դարձացման բոլոր հնարավորությունները:

Մեր սեսպուրլիկայում, Սովետական իշխանության օրով՝ թոշնաբուծությունը զգալիորեն աճել է. բոլոր կոլխոզներում կան թոշնաբուծական ֆերմաներ, գործում են մի շաբք իւկուրատորային կայաններ՝ Երևանում, Լենինականում և Սևանում, որոնք հաղարավոր ճռւտիր են մատակարարում կոլխոզներին:

Ստալինյան նոր հնդամյակով նախատեսված է գյուղատնտեսական թոշունների զլիսաքանակի և ծվատվալության զգացմի աճ:

Տեղական հավերը համարյա չեն ուսումնասիրված: Դեռ լավ չի զրված ֆերմաներում հավերի կերակրման ու խնամքի գործը: Այս ուղղությամբ գեռ մեծ անելիքներ կան:

Մեկ մոտ Հայաստանում, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Անասնապահական Ինստիտուտում, Ակադեմիայի իսկական անդամ Ս. Կ. Կարապետյանի ղեկավարությամբ՝ Յորդ տարին է ինչ հետաքրքիր փորձեր են կատարվում՝ տեղական հավերին ու ճռւտերին գրոժներով կերակրելու ու նրանց ձվատվությունը, կենդանի քաշն ու աճը բարձրացնելու ուղղությամբ: Ներկայումս մեր կողմից ուսումնասիրվում է նաև գրոժներով կերակրվող թուչունների նյութականակությունը: Անցյալում Անասնապահական փորձակայանում ուսումնասիրել ենք արյան ալյուրի և սննդարդյունաբերության ուրիշ մնացորդների ազգեցությունը հավերի ձվատվության վրա:

Մեր նպատակն է այս գրքույկով կոլխոզային թոշնաբուծական ֆերմաների աշխատազններին ծանոթացնել թոշունների ճիշտ կերակրման և խնամքի կաղմակերպման գործին:

ՏՆԱՅԻՆ ԹՐՉՈՒԽՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Ժամանակակից հավերը, ըստ Դարվինի, ծագել են վայրի բանկիվյան հավից, որը տարածված էր գեռ սրանից երեք հազար տարի առաջ Ասիայում, Հնդկաստանում, Ցիլුնում և Զոնդյան կղզիներում:

Մրանք փոքր, մինչև $0,6-0,8$ կիլոգրամ քաշ ունեցող զար կարմիր գույնի շարժուն թռչուններ էին և ածում էին միայն $8-12$ մանը ձվեր, որոնցից տարեկան երկու անգամ ճռւտ էին հանում:

Դարավոր ընտրության և լավ կերակրման շնորհիվ, այս հավերից ծագում են առել բազմաթիվ կուտուրական ցեղեր, որոնք ունեն զանազան երանգավորում, կենդանի քաշ և ձվաւավություն:

Տևային բազերը ծագել են վայրի բազերից, Դեռ 1000 տարի սրանից առաջ Հունաստանում արդեն կային ընտանի բազեր:

Ամենահին ծագում ունեն սագերը, որոնց ներկա ցեղերը քիչ են տարբերվում իրենց նախորդներից:

Հնդկահավերին ընտելացրել են 1500 տարի սրանից առաջ և մոտավորապես այդ ժամանակ ներմուծել են Եվրոպա:

ՀԱԳԵՐԻ ՑԵՂԵՐԸ

Հավերի ցեղերը ունեն ձվատու, մսատու և ընդհանուր օգտագործման ուղղություն:

Ձվատու ցեղերն ունեն բարձր ձվատվություն, բայց փոքր չենդանի քաշ և ընդունակ չեն լավ բավելու (զիրանալու):

Մսատու ցեղերը, ընդհակառակը, չունեն այնքան բարձր ձվալտություն, բայց ընդունակ են շատ միս և ճարպ կուտակելու:


Ծնդհանուր օգտագործման ցեղերն ունեն բավական բարձր ձվատվություն և մսատու հատկություններ:

Մեզ մոտ՝ Սովետական Միությունում, հայտնի են Ռւկրաինական ականջավոր հավերը, որոնք ունեն բարձր ձվատվություն և որոնց կենդանի քաշը մեծ է:

Յուրովյան ցեղի հավերը տալիս են տարեկան միջին թվով 108 ձու: Հավերի կենդանի քաշը հասնում է 3,8 կգ, իսկ աքաղաղներինը՝ 5,4 կգ (նկ. 1):

Հին ցեղերից կարելի է նշել սպիտակ լեպորներին, որոնք տարածված են ամբողջ աշխարհում, ունեն բարձր ձվատվություն, բայց մանր են և մսատու հատկությունները ցածր են: Ավելի քիչ են տարածված և կարմիր լեպորները (նկ. 2):


Խոդ-Այլանդները վառ կարմիր գույնի բավական խոշոր հավեր են, ունեն ընդհանուր օգտագործման ուղղություն: Հավերի կենդանի քաշը հավասար է 3 կգ, իսկ աքաղաղներինը՝ 3,8 կգ:




Նկ. 1. Յուրլովյան ցեղի հավը և տքաղաղը

Սրանց միջին ձվատվությունը, բնչպիս և լեզգորներինը, հասնում է տարեկան $170 - 190$ ձվի (նկ. 3):

Հայտնի են նաև ուրիշ մի շարք ցեղեր, որոնցից, սակայն,



Նկ. 2. Լեզգորներ



Նկ. 3. Առող-Այլանդներ:

մենք կարծում ենք, ետ չեն մնա, և մինչև անդամ մեզ մոտ ավելի լավ արդյունքներ կտան մեր տեղական հայերը, որոնք դեռ հին ժամանակներից հայտնի են բարձր ձվատվությամբ և գիրանալու ընդունակությամբ:

Հին կուլտուրական ցեղերից հայաստանի պայմանների համար հարմար են ճանաշված սպիտակ լիգուրները, որոնք ներկայումս բավականին մեծ քանակությամբ կան մոտ և բազմացվում են:

Փորձերը ցույց են տվել, որ մեր տեղական հավերը ընդունակ են բավական միս ու ճարպ կուտակելու, զիրանալու: Սակայն նրանց ձվատվության և մսատվության պոտենցիալ (թաքնված) հնարավորությունները զբսկվորելու ուղղությամբ զեռմինչև այժմ լուրջ ուսումնասիրություններ չեն կատարված:

Այս գործը հետզհետե պետք է կազմակերպվի մեր թռչնաբուծական ֆերմաներում, տեղի լավագույն թռչնաբույժների կողմից, անասնապահական հետազոտական հիմնարկների ղեկավարությամբ և ռայոնական զոռակությունների օժանդակությամբ: Վատ կերակրման և խնամքի հետևանքով, տեղական հավերը մանր են և շատ քիչ ձռւ են ածում: Բացի լավ կերակրելուց և

ժինամիկուց, որի ժաման խորհուրդներ կստանաքայս գլուխույկում, հարկավոր է նաև հետեւել և հայոնաբերել լավագույն հավերին, ընտրելով նրանց խոշոր ձվերից, ինկուբատորում կամ թուխսի տակ դնելու համար Խոշոր ձվեց դուրս է գալիս խոշոր և տվելի ամրակազմ ճռւտ: Այս տոհմային աշխատանքը կազմակերպելիս հավերին հարկավոր է համարակալել ոտքերին անցկացնել մետաղյա օղակ, տպած համարով և կազմակերպել ձվատվության անհատական հաշվառում:

ԻՆՉ ԿԵՐԵԲ ԿԱՄԵԼԻ Է ՏԱԼ ՀԱՎԵՐԻՆ

Հատիկավոր կերեր, Որպես հավի կեր ընդունված են՝ գարին, կորեկը, եգիպտացորենը, վարսակը, ոսպը, սիսեռը: Այս հատիկ-ները կարող են լինել նվազ (չմշկված), բայց ոչ բորբոսնած, այլապես կարող են վնասել հավերին:

Սննդարյունաբերության մնացարդները: Հավերին տալիս են նաև հացահատիկների և յուղատու բույսերի՝ կանեփի, կտավ-հատի, բամբակի սերմերի մշակման հետևանքով ստացված մնացորդներ, այն է՝ ալյուրի թեփ, ջրտղացի սպիտակ կամ մախ-բագույն փոշի և ապա տարբեր տեսակի քուսպեր և այլն:

Եթե թոշնարուծական ֆերմայի շրջակայքում կա կոնսերվի, գարեջրի, շաքարի կամ զինու գործարան, անպայման պետք է օգտագործել և սրանց մնացորդները (պտուղների մանր կորիդ-ները, մաշկերը, հատիկները և այլն), որոնք թե մննդարար են, թե շատ օգտակար: Բայց ձեզ անծանոթ կերը պետք է փորձել մի քանի, ոչ այնքան արժեքավոր թոշունների վրա, սկսելով ամենափոքր քանակությունից (3–5 գրամ), ապա նոր կերա-կըն բոլորին:

Ինչպես հատիկավոր, այնպես էլ այս և բոլոր կերերը չպետք է լինեն բորբոսնած կամ մզլած:

Կենդանական ծագում ունեցող կերեր: Հավերը մեծ պահանջ են գլում սպիտակուցային կերերի, որոնց պակասության դեպ-քում նրանց ձվատվությունը արագությամբ ընկնում է:

Առանձնահատուկ նշանակություն ունեն կենդանական ծա-գում ունեցող կերերը, մսի կոմբինատոների և ձկան արդյունա-քերության մնացորդները, որոնցից պատրաստում են մանրաց-քած և չորացրած մսի կամ մսառուկրային ալյուր, արյան կամ ձկան ալյուր:

Եթե կոլխոզում մորթում են առողջ տավար, ապա նրան արայունը կարելի է հավաքել եռացնել չորացնել և քիչ քիչ տաք հավերին:

Հայտստանում, Երևանի և Լենինականի մոտ կոմբինատներում արտադրվում է մսի, արյան և մսառոկրային ալյուր, բայց ցավոք սրտի, մեղ մոտ անասնապահության մեջ այդ արժեքավոր կերերը դեռ չեն օգտագործվում:

Կարելի է օգտագործել ոչ վարակիչ հիվանդություններից սատկած անսառների դիակները, միայն անպայման ամեն անգամ անասնաբուժի թույլտվությամբ: Դիակի սիսը պետք է եփել կաթսայում 2—3 ժամ, ապա մանրացնել չորացնել և կերցնել հավերին:

Երեխաները կարող են մատակարարել թոշնարուծական ֆերմային մի շարք սննդարար կերեր, հավաքելով գորտեր, բղեղներ, միջատներ, խլուրդներ և որդիր, Գորտերին պետք է տեղափորել պարկի մեջ և իջեցնել կաթսայում եռացող ջրի մեջ՝ կես ժամով: Խլուրդներին պետք է եփել մեկ ժամ, որից հետո կեղել հեշտությամբ անջատվում է մարմնից: Սրանց սիսն էլ պետք է եփելուց հետո չորացնել և մանրացնել պահելու համար, կամ ուտեցնել թարմ վիճակում:

Միջատները և որդերը, որոնք մնաս են հասցնում այդիներին, բանջարանոցներին և գաշտերին, նույնպես լավ կեր են հավերի համար:

Գարնանը, ծառերը կանաչելուն պես, նրանց վրա մեծ քառակությամբ բղեղներ են հավաքվում: Եթե այդ ժամանակ ծառը ուժեղ թափ տրվի, ապա տակը փռած շորի վրա կթափվեն մեծ քանակությամբ բղեղներ ու միջատներ: Սրանց պետք է տեղափորել բերանը փակ, թիթեղյա տափակ ամանի մեջ և թույլ կըակի վրա (փոխ մեջ) չորացնել Այս վիճակում կերը երկար կարող է պահպանվել: Անձրեսդերին կարելի է նույնիսկ բազմացնել Դրա համար գոմաղբով հարուստ հողը փփրեցնում են ջրում ու ծածկում տախտակներով, կամ խսիրով, որը հողը միշտ խոնավ է պահում: Շաճկի տակ որդերը արագ բազմանում են:

Միջատներ և բղեղներ կարող են հավաքել և իրենք հավերը, որոնց շարժական տնակներով փոխադրում են

արոտները կամ վարակված դաշտերը, մասսատուներից մաքրելու նպատակով. Պատմենք այս առթիվ մի դեպք:

Ակադեմիկ Տրոֆիմ Լիսենկոն 1938 թվի ամառը ստանում է Ստալինյան մարզի Օլգինյան ռայոնի Պարտույկումի քարտուղարից կայծակ-հեռագիր, որով ինը դրում է շտապ ուղարկել մասնագետ-միջատոբան, մնասարար կրիայիկի դեմ պայքար կազմակերպելու համար: Այդ միջատը անոելի տարածություններ էք զբաղել և փչացնում էր հացահատիկների ցանքերը: Վարակված ցորենի ալյուրը կորցնում էր խմորվելու ընդունակությունը, հացը թիմելիս չէր բարձրանում, փշանում էր համը, այդպիսի հացը և առաջացնում էր գլխի և հոգերի ցավիր:


Վնասատու կրիայիկը ժամանակ առ ժամանակ վարակում է դաշտերը ու շատ մեծ մնասներ հացնում: Զմեռը նա անց է կացնում դաշտերի մոտ գտնվող անտառներում:

Ստանալով հիշյալ հեռագիրը ակադեմիկոս Լիսենկոն իր ինստիտուտի գիտական աշխատողների հետ նախաձեռնեց պայքարը միջատի դեմ: Շատ ուրիշ միջոցների հետ միասին փորձեցին հետեւյալը: Միջատաբանի ղեկավարությամբ մոտակայքում գտնվող կոլխոզները իրենց ֆերմաների ամբողջ հավերին շարժական տնակներով փոխադրեցին անտառ:

Առաջին օրը հավերը հարձակվեցին միջատների վրա, ագահ հարար կերան ու մնասվեցին, բայց շուտով բոլորը առողջացան ու այնուհետև արդեն չօփազօք էին ուռում: Այդ տարին հավերը միծ օգուտ ավին, փրկելով ցանքսերը՝ իրանից հետո հավերի նման արշավներ կազմակերպվեցին և շատ ուրիշ տեղերում, մասնավորապես ճակնդեղի դաշտերի մնասատու՝ երկարակնճիթի դեմ (նկ. 4):

Կանաչ կերեր.— Միսուլ կարծիք է, որ տնային թռչուններին հարկավոր է տալ միայն հատիկներ: Ինչպես վերևում ասացինք, չափազանց կարեն են նրանց համար կենդանական սպիտակուցներով հարուստ կերերը: Դրանց հետ միասին անհրաժեշտ են հյութավոր կամաց կերեր, որոնք գյուրամարս են և պարունակում են սպիտակուցներ: Կիտամիններ¹: Դրանց թվին են պատկանում

1 Վիտամինները առանձնահատուկ նյութեր են, որոնք չափազանց վորք քանակությամբ գտնվում են բույսերի կանաչ մասերում, պտուղների և արմատապատշաճների մեջ: Վիտամինները գտնվում են նաև կենդանիների ներքեւ:



Նկ. 4. Շարժական տնտեկ

շանովի կանաչ խոտերը, ինչպես, օրինակ, երեքնուկը, առվույտը, վիկան, սիսեռը և այլն. վայրի խոտերից զատ օգտակար է եւ մինչը:

Կերաբաժնի կեսը կարող է բաղկացած լինել կանաչ կերերից և արմատապտուղներից (գաղար, ճակնդեղ, եփած կարտոֆիլ): Հավերին կարելի է տալ նաև օրական մինչև 20 գրամ սիլոս, մանրացված վիճակում: Զարեր է մոռանալ, որ ձմեռվա տմբոներին էլ թուչունը նույնպես վիտամիների պահանջ ունի: Ձմեռվա ընթացքում ձվատվության դադարելու պատճառներից մեկն էլ այն է, որ այդ ժամանակ հավերը անհամեմատ վատ են սրնվում, քան ամառը, երբ նրանք լրացնում են իրենց սնունդը պաշտում: Աւստի անհրաժեշտ է մթերել ձմռան համար վիտամիններ պարունակող կերեր: Առվույտի, երեքնուկի խոտը, եղինջը, կամ նույնիսկ սովորական բնական խոտհարքների խոտը պետք է հնձել մասսայական ծաղկման սկզբնական շրջանում: Վիտա-

քրգանների, մկանների, կաթի և ձվի մեջ: Նրանք մուտք են գործում կենդանու կամ թաշունի օրդանիզմի մեջ կերերի հետ: Հայտնի են մի քանի տեսակ վիտամիններ՝ A, B, C, D, E, K և այլն: Սրանք գտնվում են տարբեր բույսերի մեջ և ունեն տարբեր ազդեցություն օրդանիզմի վրա: Վիտամիններից որևէ մեկի բացակայությունը կամ պակասությունը առաջացնում են կենդանիների ժողովություններ, որոնք կոչվում են ավիտամինոզներ, կամ նույնիսկ մանկան են հասցնում: Այս մատին ավելի մանրամասն կասվի մի փոքր կետ:

մինները պահպանելու նպատակով կանաչ խոտը շպետք է թողնել դաշտում, արեկ տակ և պյուղը փոխազրելուց հետո չորացումը պետք է կատարել նույնպես շվագում:

Ենելով մեր փորձից, միանգամայն հնարավոր է չորացումը կատարել մաքուր ավլած և ախտահանված զոմերում, որոնք խոտննձի ժամանակ սովորաբար ազատ են լինում: Լավ կլինի խոտը կախել սյուների արանքում խփած փայտերի վրա: Հարկավոր է խոտը չորացնելու ընթացքում շուռ տալ խանել, բայց շատ զգուշությամբ, որպեսզի տերեները չժամփին: Չորացնելուց հետո վիտամինային խոտը պետք է մանրացնել, լցնել պարկերի կամ փայտյա արկղների մեջ, պահել մութ, բայց չոչ պահեստում: Մանրացումը մենք կատարել ենք փորձի ձեռվի թե կալող մեջենայով և թե կալում, երկու դեղքումն էլ ստացել ենք հաջող արդյունքներ:

Թոշնաբուծական ֆերմայի աշխատողները պետք է մեծ աշխատանք տանեն ֆերմային հատկացված մի քանի հեկտար հողամասը լավ մշակելու ուղղությամբ: Այստեղից կարելի է ստանալ ձմռան համար թե հատիկավոր կեր և թե մեծ քանակությամբ հյութալի կերեր՝ ճակնդեղ, գաղար, կարտրֆիլ, դդում:

Հանեմային նյութերը: Հանքային նյութերը, հատկապես կալցիումը, միանգամայն անհրաժեշտ է կենդանիների թոշունների սոկորների ամրության և ընդհանրապես օրգանիզմի նորմալ աշխատանքի համար:

Հավը ամեն մի ձվի կեղկի հետ արտադրում է 2,5 զրամ հանքային նյութեր, որոնցից 2 զրամի չափ կալցիում: Հաշվի առնելով հանքային նյութերի նման մեծ ծախսը, թոշուններին միշտ պիտի ապահովի լայլպիսիներով, տալով կերերի հետ, որոնք համեմատաբար աղքատ են կալցիումով, կավիճ կամ 6 ամիս առաջ հանգցրած կեր: Մի ուրիշ հանքային նյութ, ֆոսֆորը նույնպես շատ անհրաժեշտ է թոշուններին, մանավանդ նրանց ձվատվության շրջանում: Ֆոսֆորը փոքր քանակությամբ պարունակում է կերերի մեջ: Ֆոսֆորով հարուստ է այրած սոկորներից պատրաստված ալյուրը, որը իր մեջ ունի նաև մեծ քանակությամբ կալցիում: Լավ ֆերմաներում սովորաբար հավաքում են սոկորներ, այրում վառարաններում, մանրացնում են ու փոշու ձեռվ որոշ նորմաներով տալիս կենդանիներին: Ոս-

կորները այրելուց հետո գառնում են փխրուն, այրվելու ընթացքում կորցնում են իրենց օրդանական մասը, բայց պահպանում են հանքային նյութերը:

Այս գործի նախաձեռնումը մեր Հայաստանի կոլխոզներում մեծ պատիվ կրերի ֆերմաների թոշնաբույժներին:

Հանքային նյութերի պակասությունից կենդանիները և թոշունները սկսում են նիհարել, թուլանալ, պակասում է նրանց մթերատվությունը:

Մորթված հավի ստամոքսում դուք տեսած կլինեք ավազ, որի նշանակությունը մի շարք գիտնականների կարծիքով, կերը մանրացնելու մեջն է: Աւրեմն, եթե թոշուններին դուք պահում եք շենքում, կամ ավլած բակում, պետք է ունենաք ավազի կույտեր, որից հավը կարեռին չափ ինքը կօգտվի:

Ավազը ինքը չի մարսվում, ինչպես կիրը կամ ոսկրային աւլուրը:

Հավիրին մանրացված վիճակում պետք է արվի նուև փայտի ածուխ, սա ևս չի մարսվում, բայց կարեռ է որպես աղիքներում եղած գազերի և մնասակար նյութերի կլանիչ:

ԿԵՐԵՐԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՈՒՐԸ

Կերերի մնագարժեքը կարելի է բարձրացնել հնթարկելով այդպիսինները մշակման: Հատիկները կարելի է ծլեցնել որից նրանք կհարստանան վիտամիններով և թոշունները ավելի հաճույքով կուտեն:

Ծլեցման տեխնիկան շատ պարզ է: Հարկավոր է հատիկները թրջնել տակառների մեջ 2 օր, որից հետո փոել $20-30^{\circ}$ ջերմություն ունեցող շենքում $7-10$ սանտիմետրը հաստության շերտով: Մոտ մի շաբաթից հետո, եթե ծիւերը կհասնեն $6-8$ սանտիմետրի, արդեն կարելի է կերցնել հավերին:

Շատ օգտակար են դրոժացված կերերը: Դրոժացնում են մեծ մասամբ հատիկավոր կերերը: Դրոժացման պրոցեսը հիշեցնում է հացի խմորի թթվացները թթվամորի միջոցով: Թթվամորի տեղ այստեղ գործ են ածվում դրոժներ, նույնպես փոքր քանակությամբ:

Դրոժացման տեխնիկան նույնպես զժվար չէ: Երկու լիար գուլ $30-40$ աստիճան ջերմություն ունեցող ջրի մեջ լուծում են

0,5—1 կգ չոր հացի դրոժներ, որի վրա ավելացնում են 150—200 լիտր նույն ջերմությունն ունեցող գոլ ջուր: Մրամեջ հետզհետե խառնելով լցնում են 100 կգ մանրացված հատիկների խառնուը-զր: Շենքի և կերի ջերմությունը պետք է լինի մոտավորապես 23—27⁰. Խառնուրդը պետք է պահել բերանը բաց վիճակում սովորական ձեի փայտյա տաշտի մեջ: Կես ժամը մեկ անգամ պետք է խառնել, որպեսզի մասսան օդի հետ շատ շփվի և դրոժները, որոնք պատկանում են միկրոսկոպիկ,¹ սախարամի-ցետներ կոչվող սնկերի ցեղին, ստանան հարկ եղած չափով թթվածին և ավելի արագ բազմանան: 6—9 ժամ հետո դրոժաց-ված կերերը պատրաստ են: Դրոժացված կերը պետք է տալ նույն քանակությամբ, ինչ չափով որ կտրվեր նույն կերը առանց դրո-ժացնելու: Կենդանական ծագում ունեցող կերերը լավ չեն դրո-ժացվում. խառնուրդի մեջ շատ սպիտակուցներ չպետք է լինեն, այս տեսակեարից ավելի լավ է չդրոժացնել սիսեռը, սոյան, քուս-պը:

Նույն աղղեցությունը կունենա, եթե կերերը դրոժացնելու փոխարեն, հավերին տանը գարեջրի դրոժներ քամած, մամլած վիճակում ջրով նախապես լվանալուց և ալկոհոլի մնացորդնե-րը հեռացնելուց հետո. դրոժները կարելի է կերցնել թարմ կամ չորացրած ձեռվ, յուրաքանչյուր հավին օրական 5—10 դրամ: Անասնապահության մեջ գործ են ածում կերի հատուկ դրոժներ: Մոտ ժամանակներս Հայաստանում սկսելու են գործել դրոժների մի շարք գործարաններ, որտեղ արտադրվե-լու են կերի դրոժներ, հատկապես անասունների և թոշան-ների համար:

ՀԱՎԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Ինչպիս ասվեց, հավերի ձվատվությունը մեծ չափով պայ-ժանաւլոված է նրանց լավ կերակրումով: Պետք է աշխատեր, որպեսզի հավը ածի և աշնանը, և ձեռող, այդ նպատակով ան-հրաժեշտ է ամբողջ տարվա ընթացքում լրիվ ապահովել նրան պահանջվող բոլոր սննդանյութերով:

¹ Այնքան մանր, որ սովորական աչքով չեն երեսում և դիտվում են միայն խոշորացուցիչ միկրոսկոպի օգնությամբ:

Կերաբաժինները պետք է բաղկացած լինեն որքան կաթելի է, բազմատեսակ կերերից:

Նկատի ունենալով, որ առանց մասնագիտական պատրաստականության հավերի համար նորմաներ¹ կազմելը և սացիոն (կերաբաժին) նախատեսնելը դժվարություն կներկայացնի, բերում ենք Թուչնաբուծական Գիտահետազոտական ինստիտուտի օրինակելի սացիոնները, տարրեր ձվատվություն ունեցող լեզուրն ցեղի հավերի համար։ Սրանք կիրառելի կլինեն և մեր տեղական հավերի նկատմամբ, որոնք իրենց կենդանի քաշով մոտ են լեզուրներին։

Աղյուսակում դուք կպատահեք այնպիսի կերերի, որոնք չկան ձեր ֆերմայում։ Ներքեռում բերում ենք նույն ինստիտուտի դիտողությունները, այլպիսիները ուրիշ կերերով փոխարինելու չափերի մասին։

Հավերին հարկավոր է կերակրել հաճախ, օրական 4—5 անգամ։ Առավոտյան պետք է տալ չոր հատիկներ և ապա հետեւյալ 2 անգամը՝ թրջած թեփ, ալյուր և այլն։ Վերջին անգամը, երեկոյան տալ նույնպես հատիկավոր չոր կերեր։ Խմելու ջուրը թե թուչնանցում և թե բակում պետք է անպակաս լինի և փոխվի օրական 3—4 անգամ։ Զմեռը ջուրը պետք է դոլացնել և թույլ չտալ որ սառչի։

Բերքահավաքից հետո, դաշտում թափված շատ հատիկներ են մնում, որոնք չեն օգտագործվում։ Կան բազմաթիվ օրինակներ, երբ հավերին շարժական տնակներով, ինչպես նկարադրեցինք վերևում, փոխազրում են դաշտերը, բաց թողնում և օրվա վերջում նորից հավաքում տնակի մեջ։ Նույն ձևով, հավերին կարելի է փոխադրել նաև արոտավայր, խոտից օգտվելու համար։

Եթե թուչնաբուծական ֆերմային հաջողվեց կառուցել այդպիսի մի տնակ և կազմակերպել հավերի և մատղաշների փոխազրումը դաշտերն ու արոտները, ապա դա կլինի մի խոշոր քայլ կերերը լինայելու և թուչուններին ուժեղ մնունդ մատակարարելու գործում։

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԵՐԱԲԱԺՄԱՆՆԵՐ

1,7 կգ կենդանի քաշ ուժեցող հավերը համար (գրամներով)

Կերերի անունները	Մեկ ամսում մեկ հավի ածած ձվերի քանակը							
	3	6	9	12	15	18	21	24
1. ՀԱՏԿԱՆԵՐ								
Վարսակ*	60	65	70	70	70	75	75	80
Կամ ուրիշ հատիկների լիարժեք մացորդներ**	47	53	55	55	55	60	60	65
2. ԱԼՅՈՒՐԻ ԽԱՌԱՊՈՐԴ								
Վարսակի*	17	22	22	27	32	37	47	47
Կամ ուրիշ հատիկների լիարժեք մացորդներ**	14	17	17	21	25	28	35	35
Ցորենի թեփ	10	10	10	10	10	10	10	10
Առվայրի մատղաշխառ	30	25	25	20	20	10	5	5
Կենդանական ալյուր (ձկնն, մսառնկրային)	1	2	3	4	5	6	7	8
Քուազ	1	2	3	4	5	7	7	8
Ռոկրային ալյուր և կաղիճ	3,4	4,0	4,6	5,3	6	6,6	7,5	8,3
Սեղանի աղ	0,2	0,2	0,2	0,25	0,25	0,25	0,3	0,3
ՀՅՈՒԹԱԼԻԿԵՐ								
Հակնդեղ, դաղար	30	30	30	30	30	30	30	30
Բնդամենը կերեր	137-	143-	148-	150-	150-	157-	162-	170-
	153	160	168	170	178	180	188	196

¹ Այսինքն պահանջվող սննդանյաւթերի քանակը:

² Եթե տնտեսությունն ունի վարսակ, ապա երկու ասազով (^{**}) նշած կերերը չեն արվում, իսկ եթե վարսակ չունեի, ապա չպետք է հաշվել սացինում վարսակը, որը նշված է մեկ ասազով (^{*}):

Եթե հավի կախող ամիել է վերևում նշված 1,7 կիլոգրամից, ապա յուրաքանչյուր ավելորդ 100 գրամ կենդանի քաշին պիտք է ավելացնել 3 գրամ կեր, իսկ եթե պակաս է 100 գրամով, պիտք է կերը պակասեցնել 3 գրամով:

Գարնանը և աշնանը հատիկը դականութվում է 5 գրամով:



Հավերին ոչ տոհմային ֆերմաներում պահում են աքտղաղ-ների հետ միասին: Յուրաքանչյուր 10 հավի համար պետք է ունինալ մեկ աքտղաղ:

Հավերին միշտ պետք է գուրս թողնել զրոսանքի, գարնա-նը, ամառը և աշնանը ամբողջ օրով, իսկ ձմռան ցուրտ օրերին 1—2 ժամով: Զրոսանքի ժամանակ թոշնանցի բակի մի փոքր մասը պիտի մաքրել ձյունից և ծածկել ծղոտով:

Սուափոտյան հավերին գուրս պետք է թողնել վաղ, հենց որ թառերից իջնում են, որպեսզի շենքում չսկսին անհանգստանալ և իրար չվնասեն:

Դուրսը նախապես պատրաստում են կերը՝ կերամանների մեջ, ինչպես և ջուրը:

Հավանոցի հատակում լավ կլինի փսել 10 սմ հաստությամբ դարձան, որը ամեն օր մաքրվում է և մասամբ նորոգվում, իսկ ամիսը 2 անգամ ամբողջապես փոխվում:

Այս տեսակետից թոշնաբուծական ֆերման կերերի հետ միասին նախապես պետք է պատրաստի և դարձանի պաշար:

Ամառը հատիկավոր կերը պակասեցվում է 10 գրամով, իսկ խոռի ալուրը, ճակնդեղն ու զազարը փոխարինվում են կանաչով: Չոր խոտի տեղ ազը-գում է քաշով 3 անգամ ավելի կանաչ:

Կենդանական ալյուրը և քուսպը կարելի է փոխարինել անտեսության մեջ գտնվող ուրիշ սպիտակուցային կերերով, հետևալ հարաբերությամբ՝

1 գրամ կենդանական ալյուրը փոխարինվում է՝

12—15 գրամ քաշած կաթով,

կամ 3 գրամ շոռով

» 1,5 գր խաշած մոսկ

» 1,5 գր քուսպով

» 2,5 գր սփինոսով կամ ռոսով:

Այսուրի խառնուրդի մի մասը (մինչև 14 գրամը) կարելի է փոխարինել 3—4 անգամ ավելի քանակությամբ կարտոֆիլով: Բայց այդ զեպքում յուրաքանչյուր 10 գրամ կարտոֆիլին պետք է ավելացնել 0,2—0,3 գրամ մամի կտոր յան չոր ալյուր, կամ քուսպ: Սպիտակուցի տոկոսը լրացնելու նպատակով:

Հատիկների լիարժեք մնացորդներ համարվում են չմշկված հացահատեկները, վասառառների կողմէց փչացրած հատիկները և մոլախոտերի ոչ վնասակար հատիկները: Մնացորդները պետք է զուրկ լինեն հողի, դարձանի և ուրիշ ոչ պիտունի խառնուրդից:

Հատակին փոելու համար օգտագործում են նաև տորֆը, որից կա մեր ռեսպուբլիկայի մի շարք ռայոններում:

Հավանոցի ջերմությունը ձմեռը պետք է 0°-ից չիջնի, արդեն՝ 10°. ի դեպքում հավերը զգալի չափով իջեցնում են ձվատը-վությունը, իսկ՝ 12° նրանց կատարները սառչում են:

Ենքում, թե ձմեռը և թե ամառը ողը պետք է լինի մաքուր: Անհրաժեշտ է շատ ուժեղ պայքարել խոնավության դեմ, վերջինս նպաստում է հավերի հիվանդանալուն:

Թռչնանոցում պետք է պահպանել մաքրություն՝ թառերը շաբաթական 2 անգամ լվանալ, իսկ հիվանդությունների դեպքում ախտահանել:

Թռչնանոցի պատերը պետք է հնարավորին չափ հաճախ սպիտակացնել չհանգըրած կրով, որը հականեխիչ հատկություն ունի: Թառերի տակ, երեկոյան, նպատակահարմար է հատուկ տախտակյա վահաններ ամրացնել, մոխիր ցանել դրանց վրա, որպեսզի առավոտյան կեղալ մաքրվի հեշտությամբ և դուրս բերվի մոխիրի հետ:

Հիվանդներին և թույլերին անպայման պետք է առանձնացնել հատուկ շենքում:

Մի շարք խոշոր թռչնաբուծական տնտեսություններում կիրառվել են թռչնանոցի լուսավորում, ուժեղ էլեկտրական կամ նավթի լամպերով՝ երեկոյան մինչև ժամը 9—10-ը, իսկ առավոտյան սկսած ժամը 4-ից: Այս միջոցառման հետեւանքով հավերի ձվախությունը բարձրացել է 85 տոկոսի սահմաններում, զնորհիվ այն բանի, որ ավելի երկար է տևել նրանց համար ցերեկը և նրանք կարողացել են ավելի շատ կեր ուտել:

ԻՆԿՈՒԲԱՑԻԱ

Ինչպես հայտնի է, թռչունի սաղմի աճումը կատարվում է մոր մարմնից գուրս և այդ միջոցին սաղմը աճում է ձվի մեջ պարունակվող սննդանյութերի հաշվին:

Տաքացման հետեւանքով ձվի միջից ճուտ կուրս գալու գործողությունը կոչվում է ինկուբացիա: Բացի բնական ինկուբա-

ցիայից, երբ թուկսը իր մաքմանում է տաքացնում ձվերը, կանոն արհեստական ինկուբացիա:

Արհեստական ինկուբացիան հայտնի էր գեռ սրանից 2000 տարի առաջ հին Չինաստանում և Եգիպտոսում: Եվրոպայում ինկուբացիայի փորձեր են արվել 17-րդ դարում, բայց անհաջող, իսկ 19-րդ դարում ինկուբացիան արդեն բավական տարածվում է: Մոռաստանում մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեզուլուցիան մանը ինկուբատորներ կային միայն առանձին կալվածատերների տնտեսություններում:

1929 թվին, Սովորական Միության ինկուբատորների արտադրության ծավալման հետ միասին ինկուբացիան սկսում է լայն կերպով տարածվել:

Ինկուբացիայի տեխնիկան գնալով կատարելազարծվում է և ներկայումս արդեն լավ կայաններում յուրաքանչյուր 100 ձբկից ստացվում է 88 ճուտ, իսկ երրեմն 90-ից էլ ավելի:

Ինկուբացիայի առավելությունը կայանում է նրանում, որ հնարավոր է գառնում ճուռեր ստանալ տարվա ամեն մի ժամանակ, և, որ շատ կարենք է, հավերին թուխս չեն նստեցնում և նրանք շարունակում են ճուռ ածել ինկուբացիան տևում է 21



օր և այդ ժամանակամիջոցում ինկուբատորում պահպանվում է կայուն բարձր ջերմականություն և որոշ խոնավություն, որոնք համապատասխանում են հավի մարմնի ջերմությանն ու խոնավությանը: Ինկուբատորում և թուխսի տակ գնելու համար, ինչպես արդեն ասվել է այդ մասին, ընտրում են լավագույն հավերից ստացված ամենախոշոր և ծանր 55—65 դրամ քաշ ունեցող ձվերը: Ընտրված ձվերը պետք է դիտել օվուլոպով:¹ Պիտանի են համարվում այն ձվերը, որոնց գեղնուցը մեջտեղումն է, կամ մի փոքր մեջտեղից ցածր:

¹ Օվուլոպն ունի շատ պարզ կտառքվածք, որ մի փոքր ֆաներալից կամ կարտոնից պատրաստած արկղ է, որի ներսում տեղադրում են նավթի կամ էլեկտրական լուսով: Արկղի պատի վրա պատրաստած ձվածեանցը դիմաց բանած ձուն լավ թափանցվում է:

Ինկուբացիայի հինգերորդ կամ յոթերորդօրը ձվերը կրկին պիտում են օվոսկոպի օգնությամբ և հեռացնում են բոլոր չքեզմնավորվածները: Նույն տիպի դիտում (միրաժ) կատարում են նաև 14-րդ օրը և դարձյալ հեռացնում են այն ձվերը, որոնց մեջ սաղմը չի գոյացել:

Բնական ինկուբացիա: Հավերը սովորաբար թուխս են նստում 21 օր, բաղերը՝ 28, իսկ սագերը՝ 30 օր:

Ձվատու աւղղություն ունեցող հավերը, օրինակ՝ լեգգորները վատ թուխսեր են, կամ մեծ մասմբ բոլորովին գուրկ են այդ բնագլից, իսկ լնդհանուր օգտագործման ուղղություն ունեցող ցեղերը, առավել ևս տեղական հասարակ հավերը, ընդհանրապես յավ թուխսեր են:

Ավելի համբերատար և խնամատար թուխսեր են լինում երկու տարեկան և ավելի մեծ հավերը:

Թուխսի բունը պատրաստում են 30×30 սանտիմետր մեծություն ունեցող արկղի մեջ, որը նպատակահարմար է տեղափորել հողի հատակ ունեցող շենքում, որտեղ պահպանվում է ձվերի համար օդի անհրաժեշտ խոնավությունը:

Բնի մեջ պետք է փոել ղարման ու մեջտեղը մի փոքր փոս զցել Սովորաբար թուխսի տակ դնում են 11—13 ձու: Խոշոր հավի տակ տեղափորվում է 15 հատ, իսկ եթե եղանակը տաք է, նույնիսկ 17 ձու: Ձվերը պետք է լինեն թարմ, ոչ ավելի քան 3—5 օրվա ածած, նորմալ ձևի, չլինեն երկարավուն, շատ կլոր, տափակ և ունենան նորմալ ամբողջանի կեղև:

Թուխսը սովորաբար քիչ է ուտում, բայց այնուամենայնիվ պետք է հետեւել, որ օրական գոնե մեկ անգամ նա դուրս գտնից, ուտելու, խմելու և մաքրվելու համար:

Շատ լավ կինի թուխսի կողքին ունինալ մոխրի լողարան, որտեղ հավը կարողանա թափալվել: Երկար նստելու հետեւանքով նրա, վրա կարող են բազմանալ միջաներ: Այդ փոքր ընդմիջման ժամանակ ընից պետք է հանել կեղատոտած դարմանի մասերը, փոխարինելով նորով:

Երրորդ շաբաթվա մերջում ձվից սկսում են դուրս գալ ձուամբերը: Այդ ժամանակ պետք է հետեւել որ թուխսը տեղից երկար ժամանակով չհեռանա: Հավին պետք է օգնել զգուշաբար հանել նրա տակից ձվի կճեպները: Բոլոր նուտերը դուրս գալուց

հետո, հավին և ճուտերին պետք է փոխադրել նոր մաքուր բնի մեջ:

Հաճախ հավի տակ դնում են բաղի, սագի կամ ննդկահավի ձվեր: Դա արգում է այն ժամանակ, երբ ցանկանում են այդ թռչուններին թուխս չնստեցնել, որպեսզի նրանք շարունակեն ձռ ածել, Բացի այդ, հավերը ավելի լավ թուխսեր են քան ջրային թռչունները՝ բաղերը և սագերը:

Հավի տակ դնում են 5—8 սագի, 7—12 բաղի ձռ:

ՃՈՒՏԵՐԻ ԽՆԱՄՔԸ ԵՎ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Ինկուբացիոն կայանից ճուտերին փոխադրում են մեկ, իսկ երբեմ 3—5 օրական հասակում, հատուկ պատրաստված արկղներով, որոնց մեջ կան օդանցքներ և հատակին փոված է դարձան: Նրանց տեղափորում են բրուգերնառուզում, լավ տաքացվող հատուկ շնչքում, որտեղ սովորաբար պահում են ճուտերին: Բրուգերնառուզի ջերմությունը պետք է հարմարեցնել ճուտերի հասակին:

1-ից 5 օրական	ճուտերինամար	պետք է լինի	30—29°
6—10	»	»	» 28—26°
11—20	»	»	» 25—23°
21—30	»	»	» 22—21°
31—40	»	»	» 21—18°

Իսկ 40 օրականից հետո ջերմությունը պետք է պահպանել 16° վրա:

Շենքում քամիներ չպետք է լինեն, Օղը պետք է լինի չոր, որի համար առանձնապես անհրաժեշտ է հետեւ հատակի չորությանը և մաքրությանը:

3—4 օրական ճուտերին տաք և արև օրերին կարելի է աստիճանաբար սովորեցնել ման գալ դրսում: Առաջին 3—4 օրը ճուտերին կերակրում են խաշած կորեկով, պինդ խաշած ձվով, մածնով կամ կաթով շաղախած ալյուրի խուսով, խմեցնում են կաթ, եռացրած գոլ ջուր:

Երեկոյան ճուտերին պետք է ստուգել, թույլերին և այնպիսիներին, որոնց քուչերը դատարկ են, առանձնացնել և հատուկ խնամել: Ճուտերին պետք է կերակրել հաճախ սկզբում՝ 6, ապա 4 անգամ: Նոր կերերը պետք է տալ, սկսելով փոքր քանակությունից և հետզհետե ավելացնել: Չորրորդ օրվանից արդեն կարելի

է տալ մանրացբած կանաչ խոտ, առվույտ կամ երեքնուկ. 10 օ-
րսկանից՝ աղացած ցորեն, եգիպտացորեն, կամ մաղած վարսա-
կի ալյուր, ապա արդեն սկսում են տալ կերերի խառնուրդներ:


Կերերի բաղմաղանությունը միանդամայն կարևոր է, որ-
պիսպի մի կերի մեջ պարունակվող սննդանյութերը լրացնեն այն,
ինչ որ չկա մյուս կերերի մեջ, և աճող ճուտերն ապահովված
լինեն բոլոր տեսակի պահանջվող սննդանյութերով:

Արդեն 4—5 օրականից ճուտերին բաց են թողնում արոտ:
Ճուտը զարդանում է մեծ արագությամբ. եթե 10 օրական
հաստկում նրա կշիռը հասնում է 60 գրամի, ապա երկու ամսա-
կանում արդեն 550 գրամի, 3 ամսական ժամանակ—900 գ, իսկ 5
ամսական հասակում՝ 1,5 կգ. ի:

Աճող ճուտերի կերակրումը պետք է լինի առատ և կանո-
նավոր, բավարարի հիմնական սննդանյութերի նրանց պահանջը:

Սպիտակուցների պահանջը բավարարելու համար բացի հա-
տիկներից, որոնք քիչ սպիտակուց են պարունակում, պետք է
տալ քուսպ, մսի կամ արյան ալյուր, կաթ, թան: Ճուտերը մեծ
պահանջ են գգում նաև վիտամինների:

Ա վիտամինի պակասության գեպքում նկատվում է աչքերի
հիվանդություն, լնդհանուր աճի զանդաղում, թուլություն և եթե



Նկ. 6. Ա-ավիտամինոզով տառապող հավը:


իսկույն չսկսել տալ գաղար կամ կանաչ խոտ, անքաշ կաթ, հի-
վանդությունը բարգանալով կարող է հասցնել մահվան (Նկ. 6):

D վիտամինի պակասության դեպքում ճռւտելը հիվանդանում էն ռախիտով, որի հետևանքով նրանց աճը գանդաղում է, ոսկորները ձեւափոխվում են: Այդ երեսությները կանխելու համար ճռւտին պիտօք է տալ ձվի գեղնուց, կամ ոսկրային ալյուր ու երկար թողնել արեսում, իսկ եթե հիվանդությունը ուժեղ է արտահայտված, այդ գեղքում յուրաքանչյուր ճռւտին պիտօք է տալ օրական 0,5—1 գրամ ձկան վիտամինացված յուղ (նկ 7):



Նկ. 7. Հավերի սաքերի հիվանդություն, D ավիտամինոզի հետևանքով:

B խմբի վիտամինների պակասությունը արտահայտվում է ախորժակի բացակայությամբ, մարսողության խանգարումով, ուաքերի ու թեփերի ջղերի հիվանդությամբ և թուլացումով: Ճռւտերը ստանում են պարալիչ: Օրական 1—2 գրամ չորացրած պըոժները կարող են կանխել և բուժել հիվանդությունը (նկ 8):



Նկ. 8. B-ավիտամինոզով հիվանդ թռչունը:

Համեմային նյութերը չափազանց կարևոր են աճող օրգանիզմին: Ճռւտերին պիտօք է տալ սովորական սեղանի աղ, ոսկրային ալյուր, կավիճ:

ՕՐԻՆԱԿԵԼԻՒ ԿԵՐՊԱԾԺԻՆՆԵՐ

1-ից-150 օբական ճուտերի համար (դրամներով մեկ օրում)

Կերպի անունները	Ճուտերի հաստկը օրելով									
	1—3	4—6	11—20	21—30	31—40	41—50	51—60	61—90	91—150	
1. ՀԱՏԻԿԱՎԱՐ ԿԵՐԵՐ										
Ճորինի ու զարու մանրացրած մնացորդներ և խաշած կորիկ	4	6	—	—	—	—	—	—	—	—
Զանազան հատիկների աղացած մնացորդներ	—	1	9	9	9	9	9	9	9	9
Մանրացրած հատիկներ	—	—	—	5	8	16	16	25	30	
Ճորինի թեփ	2	2	4	8	8	10	10	15	20	
2. ՍՊԻՏԱԿՈՒՑԱՅ- ՅԻՆ ԿԵՐԵՐ										
Քուսող՝ արհածաղկի, սոյայի, կոռավհատի կամ բամբակի	—	—	—	1	3	5	5	10	10	
Գինու խաշած ձու	1	1	—	—	—	—	—	—	—	
Շոռ	—	1	4	4	4	—	—	—	—	
Մոլի մնացորդներ, լոգի խաշած, մանրացրած	—	—	—	3	5	5	5	10	10	
ՎՐԱՍՄԻՆԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒԹԱԼԻ ԿԵՐԵՐ										
Մածուն	4	6	10	10	5	—	—	—	—	
Մանրացրած կանչ կամ դաղար	1	4	8	12	16	24	30	30	30	
Եփած կարտոֆիլ կամ ճակնդեղ	—	—	—	8	12	18	18	20	20	
ՀԱՆՔԱՅԻՆ ԿԵՐԵՐ										
Երբ, կալիճ, աղաջ, խեցիներ	—	—	1	1,5	1,5	3	3	3	4	
Մեղանի, աղ	—	—	—	0,2	0,3	0,2	0,3	0,4	0,4	
Բնագամինը կեր (գր)	12	21	36	61,7	71,8	99,3	111,3	142,4	158,4	

Թոշնաբուծության ինստիտուտի կողմից առաջարկված՝
ձևատերի կերակրման սխեմաները կիրառելի են Միության մեծ
մասի համար, և բավական հարմար են օգտվելու տեսակետից,
ուստի հիշած սխեմաները մենք առաջարկում ենք որպես օրի-
նակելի, վերապահելով տեղերում փերմայի աշխատողներին, հաշ-
վումներ կատարել զոռակեխնիկի զեկավարությամբ և սխեմայի
որոշ կերերը փոխարինել տեղական կերերով, պահպանելով կե-
րաբաժնի ընդհանուր մննդաբարությունը:

Այս աղյուսակից պետք է օգտվել նույն ձևով, ինչպես հա-
վերի կերակրման աղյուսակից:

Շատ լավ է, եթե բոլոր ձևատերը միևնույն Հասակի են: Այդ
գեղքում, թե շենքի ջերմությունը, թե կահավորման հարմարե-
ցումը, թե կերերի նախապատրաստելը միատեսակ են լինում և
աշխատանքը ավելի թեթևանում է ու հաջող ընթանում:

Երբեմն կոլխոզները գդվարանում են, և կարծես թե խու-
սափում են՝ ինկուբացիոն կայանից մեկ օրական ճուտեր ստա-
նալուց: Դրա պատճառն այն է, որ չկարողանալով լավ նախա-
պատրաստել ճուտերի ընդունելությունը, զգալի կորուստների
առաջ են կանգնում՝ ճուտերի անկումը առաջին օրերը և շա-
բաթները մեծ չափերի են հասնում:

ԹԻՉՆԱՆՈՑԸ ԵՎ ՆԲԱԿԱՀԱՐՈՒԽԸ

Կարերագույն նշանակություն ունի թոշնանոցի ծիշտ տե-
ղագրումը: Թոշնանոցը պետք է լինի գյուղի ծայրում, բայց
կենտրոնից ոչ այնքան հեռու, քամիներից զերծ տեղում, շրջա-
պատված կանաչ արոտներով: Կանաչապատ բակի շուրջը քամի-
ներից պաշտպանելու նպատակով պետք է տնկել ծառեր, և
թփուտներ, բակի մեջտեղը նույնպես պետք է տնկել ծառեր, կամ
ծածկ կապել որտեղ հավերը կարողանան պաշտպանվել արելոց:

Թոշնանոցը կառուցելիս պետք է նախատեսնել յուրաքան-
չյուր 3 գլխին մեկ քառակուսի մետր տարածություն, կուտա-
մուտները շինում են ցածր, ներքեմի մասը հատակից 0,75—0,5
մետր բարձրության վրա, որպեսզի հատակը լավ լուսավորված
լինի: Լուսամուտների ընդհանուր ծավալը պետք է կազմի հա-
տակի ^{1/10} մասը:

Հավանոցի պատի ներքեմ մասում պատրաստում են անցքեր, որտեղից հավերը զուրս ու ներս են անում: Անցքերի չափը 30×25 անտիմետր է: Դրսից նրանք ունենում են գոնակներ: Բացի առաստաղի վենտիլացիոն խողովակներից, հավանոցում լրացուցիչ օգաննցների պահանջ է զգացվում: Այդ նպատակով մի քանի լուսամուտների կես շրջանակը ապակու փոխարեն պատում են մարլայով կամ ուրիշ թափանցիկ կտավով: Ցրտերին սրանց վրայից ծածկում են լրացուցիչ փայտյա փեղկեր:

Թռչնանոցի հատակը լինում է հողե, փայտյա, բետոնից կամ տսֆալտից: Հողե հատակը վատ է նրանով, որ թռչունը փորում է այն, բացի այդ, հողի մեջ դարձանում են հավի պարագիտներ և վերջապես մկներ, որոնք ճաւտերի թշնամիներն են, փորում են հողը և ներս գալիս: Ցեմենտի հատակը սառն է. լավ հատակ է համարվում փայտից շինածը կամ ասֆալտածը:


Հատակը հաճախ պետք է լվանալ և ախտահանել կրեոլինի 5 տոկոսանոց լուծույթով կամ կրածրով:

Հավերի թառերը պետք է դնել ցածր, հատակից $0,7 - 0,9$ մետրի վրա: Հեռավորությունը միմյանցից պետք է լինի $30 - 40$ սմ: Թառերը չպետք է լինեն կլոր, հաստությունը 5×5 սանտ., կամ եթե շատ երկար են 5×10 սանտ.: Թառերի անկյունները նպատակահարմար է բթացնել՝ հավերի ստքերը չցավեցնելու համար:

Ցերեկը թառերը պետք է հավաքել և ամրացնել պատին: Յուրաքանչյուր հավին թառի վրա պետք է նախատեսնել $15 - 20$ սանտիմետր տեղ:

Սխալ են անում, երբ կերը թափում են հավերի առաջ՝ գետնին. ավելի ճիշտ է կերը տալ ամաների մեջ. այդպես է արքում բոլոր լավ հավաքուժական տնտեսություններում: Կերամաները պետք է լինեն այնպիսին, որ հավը չկարողանա մտնել մեջը, կամ շրջել և կերը թափիլ:


Նկար 9-ում տրվում է կերամանի ձեր, որի մեջ տալիս են չոր և թրջած կերերը և մանրացած խոտը: Կանաչ խոտը գնում են մի կողմով պատին ամրացրած, մետաղյա ցանցից պատրաստած զամբյուղի մեջ, որի ծակոտիներից հավերը պոկում են կանաչը:



Նկ. 9 Կնևաման հավերի հաճար:

Ջրամանները նույնպես
պետք է լինեն այնպիսին,
որ հավերը չշրջեն - և չկեզ-
տատեն ջուրը (նկ. 10-ում
տրվում է ջրամանի ձևերը):
Լավ է ջուրը ամանով ամ-
րացնել աթոռի կամ արկղի

վրա: Ճուտերի ջրամանը իրենից ներկայացնում է տափակ
կափե աման, որի վրա շրջում են բերանի մոտ անցք ունեցող
կափե պուտուկ և ճուտերը ջուրը պետք է խմեն տափակ ամանի
եղբերից: Տափակ ամանի մեջ ջուրը կլցվի պուտուկից և միշտ
կլինի անցքի մակարդակի վրա (նկար 11):



Նկ. 10 Հավերի ջրաման:




Նկ. 11. Ճուտերի ջրաման:

Թե հավանոցում և թե բակում դրվում են մոխրի լողարան-
ներ (ոչ խոր տաշտակներ), որտեղ հավերը թափալվում են-
սա պարագիտների դիմ պայքարելու լավ միջոց է:

Լողարանի մեջ լցնում են հավասար չափերով փայտի մո-
խիր ու ավագ. ցանկալի է ավելացնել նաև 20 տոկոսի չափով
ծծմբի փոշի (նկար 12):

Յուրաքանչյուր 6 հավին նախառեսնվում է մեկ ձու ածե-
լու բուն: Բները պետք է տեղափորել հավանոցի մութ մասում,
մեջը հաճախ մաքրել և դարձանը նորոգել թացի սովորական
բներից, կան և կոնտրոլ բներ, որոնց գուռը թողնում են կիսա-
բաց, տյնակիս, որ հավը ներս մտնելուց դուռը ետևից ինքն իրեն



Նկ. 12. Մոխրի լողարան:


Փակվի, ջուն ածելուց հետո վերեկց բաց են անում խուփը, հանում են հավը և զրանցում ձվատվության հաշվառման ժամանում նրա համարը և ձվի կշիռը: Այսպիսի բները անհրաժեշտ են այնտեղ, որտեղ կատարվում է ձվատվության անհատական հաշվառում և առհմային աշխատանք:

ԲՐՈՒԴԵԲՀԱԱՌԻՉԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ

Առաջին իսկ օրվանից ճուտերին տեղափորում են բրուդեր հառողում: Այստեղ, ինչպես և հավանոցում լուսամուտները շինում են ցածր: Բրուդերհառողում, ինչպես ասկեց, ամբողջ որը պետք է պահպանել միատեսակ ջերմություն: Այդ նպատակով աղյուսից կառուցում են հատուկ ձեր վառարան, որից ամբողջ սենյակի երկարությամբ գնացող աղյուսապատ խողովակներով ջերմությունը տարածվում է սենյակում: Երեհմա այս խողովակը շրջապատում են տախտակյա բարակ պատերով, որպեսզի ճուտերը հավաքվին մեջը և տաքանան:

Իսկ եթե շենքը տաքացվում է սովորական ձեր պատի վառարանով (ոչ մի գեպքում չպետք է օգտագործել թիթեղյա վառարան, որը երկարատե չի պահպանում կայուն ջերմությունը), այդ գեպքում ճուտերին տաք տեղով ապահովելու նպատակով սարքում են այսպես կոչված էլեկտրիքը: Էլեկտրը մի փայտյա արկղ է, վերեւում 45×45 սմ, իսկ ներքեւում 65×65 սմ մեծությամբ, որի տակը բաց է և խորից շարժական: Եթե տախտակը կոպիտ է, ներսի կողմից արկղը պատում են ֆաներյով կամ կարտոնով, հատակին փոռում են թաղիք, կամ մի քանի շերտ թուղթ ու վրան դնում 7—8 լիտրանոց կավե ամանով տաք ջուր:

Ամանի բերանը լավ ծածկում են և վրան դնում դարձանով ցված բարձ՝ ջերմությունը պահպանելու համար։ Ամանի շուրջը, արկղի ներսը հատակին փռում են մանր ծիծած դարձան։ Սրկզի պատերից մեկի տակը 15 սանտիմետր բարձրության վրա բաց են թողնում և վրան կախում ժագավիճաների պիս կտրտած վարագույքը, որտեղից ճռւածերը ներս են մտնում ու տաքանում (նկար 13)։ Ելեվեղում ջերմությունը պահպանվում է 8 ժամվա ընթացքում և օրվա մեջ ջուրը փոխում են 3 անգամ։ 15—20 օրական ճռւածերի համար ջուրը կարելի է նորոգել 12 ժամը մեկ անգամ։



Նկ. 13. Ելեվեղը բաց և փակ վիճակում 1. Դռան վրայի վարացությունը, 2. Գուտուկը իր խուփով, 3. Բարձը

Բրուղերհառում ջերմությունը չափում են հատակից 15
սանտիմետր բարձրության վրա: 25 օրականից ճուտերը այլևս
էլեկտրական մեջ չեն մտնում, այլ հավաքվում են նրա շուրջը փոած
դարձանի վրա: Իսկ հետո, երբ արդեն էլեկտրական մեջ տաք ջուրը
չեն դնում, ճուտերը ազատ օգտվում են նրա միջի ամրող տա-
րածությունից:

Այսպիսով ճռւտերի ճիշտ խնամելուց և կերակրելուց մեծ չափով կախված է ամրող ֆերմայի աշխատանքների հաջողությունը:

ԶՐԱՅԻՆ ԹԻՉՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՆԴԿԱՀԱՎԵՐԸ

Մեղ մոտ Հայաստանում ջրային թռունները՝ բաղերը և սագերը շատ քիչ են տարածված, չնայած որ կան բոլոր պայմանները թունաբռնություն այդ ճյուղերի զարգացման համար:

Սագիրը և բաղերը քիչ ձու են ածում և հիմնականում հանդիսանում են մսատու թռչուններ։ Նույնպիս մսատու են համարվուծ նաև հնգկահավերը, որոնց միսը չափաղանց նույրը է և համեղ։

Ծատ զիսպերում մեր կոլխոզներում ուղղակի սովոր չեն այս թռչունների խնամելուն և բազմացնելուն ։ Ներկայումս հարցէ զրված ամեն կերպ զարկ տալ ջրային թռչունների գլխաքանակի բազմացմանը:


ՊԱԴԵՐԻ ՑԵՂԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Սագերի լավագույն ցեղերը կտնվում են Սովետական Միաւթյունում: Նշենք Խոլժողորի սպիտակ, Տուրայի մոխրագույն, Արզամասի, Ռեբալյան և Պակրվյան սպիտակածակատ սագերին: (Նկար 14): Միջին թվով սագերը ածում են տարեկան 11—30 ձուռ կաշուածի առաջ համաստու է 5—10 հետառամեկ:

Արպեսզի բավարարութ օ,օ զի կօսդամի քաշ ունեցող և տ-
ձուռ ածող սագի պահանջը, ձվատվության շրջանում պիտի նը-
րան տալ օրական հետեւյալ կերերը՝

Հատիկավոր կերեր	270	զ
Սպիտակուցներով հարուստ կերեր	35	զ
Խռոս	30	զ
Հանքային կերեր	21,5	զ

Հատիկավոր կերերի մի մասը կարելի է փոխարինել եվտծ կարտոֆիլով, տալով այն 3 անգամ ավելի քանակությամբ։ Սա-գերին կարելի է տալ օրական 50—100 գր ճակնդեղ կամ լավ-աիլոս, ավելացնելով վերջինի վրա 3—4 գր կավիճ։



Նկ. 14. Խոլմոգորյան սագեր

Կերերի սպիտակուցների, վիտամինների և հանքային նյութերի նշանակության մասին մենք մանրամասն ասացինք հավերի կերակրումը նկարագրելիս, ուստի այստեղ չենք կրկնեն։


Սագերին, բացի ձմռան ցուրտ օբերից, միշտ պետք է քշել արոտները, իսկ բերքահավաքից հետո նաև դաշտերը, ընտրելով այնպիսի տեղեր, որտեղ ջուր կա։ Մեկ սագի համար տարեկան պետք է նախատեսնել մոտ 50 կգ հատիկավոր և 2—4 կգ սպիտակուցային չոր կերեր։

ԲԱՐԵՐԻ ՑԵՂԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Սովորական Միությունում լայն կերպով տարածված են Պեկինյան բաղերը։ Եզերի կենդանի քաշը հասնում է 3,5 կգ, իսկ արոտներինը՝ 4,0 կգ։ Հավագույն տնտեսություններում բա-

զը տարեկան ածում է մոտ 86 ձու: Սովետական Միության ռեկորդը եղել է 156 ձու:

Մեզ մոտ մասամբ տարածված է նաև խակի-կեմպրել ցեղը: Սրանց ձվատվությունն ավելի բարձր է և հասնում է 150—200:



Նկ. 15. Արու և էգ բաղեր

ձի, չնոյած կենդանի քաշը ավելի պակաս է և տատանվում է 2—3 կգ սահմաններում:

Բաղերին պետք է կերակրել նույն ձեռվ, ինչ որ սազերին թունաբուծական գիտահետազոտական ինստիտուտը առաջադրում է հետեւյալ օրինակելի ռացիոնը 2 կգ կենդանի քաշ ունեցող, 18 ձու ածող բաղերի համար, ձվատվության շրջանում:

Վարսակ	80 գ	Կանաչ եղինջ	40 գ
--------	------	-------------	------

Գարի	80 գ	Ոսկրային ալյուր	10 գ
------	------	-----------------	------

Ցորենի թեփ	62 գ	Կավիճ	8,5 գ
------------	------	-------	-------

Քուսազ	15 գ	Սեղանի աղ	1,0 գ
--------	------	-----------	-------

Եփած միս	10 գ
----------	------


Կերերը մեկը մյուսով փոխարինելիս կարելի է օգտվել հավերի կերակրման աղյուսակի ծանոթությունից: Բաղերի, ինչպես և սագերի համար կարելոր է ունենալ արոտներ՝ գետի կամ լճակի ափին, որտեղ նրանք հարուստ կեր են գտնում՝ մանր ձկներ, որգեր, միջատներ և օգտվում են կանաչից: Այս դեպքում նշան ռացիոնից կերերը կարելի է կրծատել 25—30 տոկոսի չափով:

ՀՆԴԿԱՀԱՎԵՐԻ ՑԵՂԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Հնդկահավերի ցեղերից ամենալավը համարվում է բրոնզագույնը: Կան նաև սպիտակ հնդկահավերի:

Սովետական Միությունում տարածված են բրոնզագույն և տեղական հնդկահավերի մետաղները:

Սովորողներում հնդկահավերի միջին կենդանի քաշը հասնում է 5,8 կգ, իսկ արուներինը՝ 11,8 կգ: Տարեկան միջին ձվատվությունը համառ է 74 հատի:



Նկ. 16. Բրոնզագույն հնդկահավերի

Թռչնաբուծական ինստիտուտի օրինակելի ռադիոնը նախատեսված է 5 կգ կենդանի քաշ ունեցող և 18 ձու ածող հնդկահարերի համար, ձվատվության դրջանում:

Համարկավոր կերեր	120 գ	Հացի գրոժներ	10 գ
Ճորենի թեփ	30 գ	Կաթի շիճուկ	50 գ
Կենդանական կերեր	10 գ	Կավիճ և ոսկրա-	
Քուսպ	10 գ	յին ալյուր	10 գ
Կարտոֆիլ խաշած	50 գ	Սեղանի աղ	1,5 գ
Վարսակ ծլեցըած	40 գ	Կանաչ խոտ	100 գ

ԶՐԱՑԻՆ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՆԴԿԱՎԱՎԵՐԻ ՃՈՒՏԵՐԻ
ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Թաղերի, սագերի և հնդկահավերի ճշերի ինկուբացիան և ճռւտերի բրուղերհառւզում մնջացնելու պայմանները հիմնականութ նման են հավերի ճռւտերի աճնոցան պրոցեսին, միայն շենքը և ամանեղենը մի փոքր ավելի մեծ պետք է նախատեսնել: Առողջ ճռւտերը մեկ օրական հստակում ամուր պետք է կանգնեն ռոտքերի վրա և ուտեն իրենց կերաբաժինը:

Եթե ձեւերը դրված են եղել թուխսի տակը, ապա նենց որ ճռւտերը դուրս եկան ձվից, պետք է հետեւ, որ թուխսը շարժվելիս չծխլի նրանց, ճռւտերին չորանալուց հետո դուրս պետք է հանել և տեղափորել մաքուր արկղի մեջ՝ փափուկ դարմանք վրա:

Եթե ճռւտերը ստացվում են ինկուբատորից, ապա նրանց պետք է տեղափորել լավ նախապատրաստված և տաքացրած բրուղերհառւզում, որը նպատականարժար է ֆաներով բաժանել առանձին սեկցիաների և յուրաքանչյուր հստակացին խումբը տեղափորել առանձին-առանձին:

Էլեվեգի տակ ջերմությունը պետք է լինի առաջին հնդօրյակում 28° , երկրորդում՝ 25° , երրորդում՝ 21° , Շենքում տաքությունը պետք է լինի $16-18^{\circ}$ -ի սահմաններում: Տաք եղանակներին մի քանի օրական ճռւտերին կարելի է թողնել դուրս՝ արոտի վրա:

Այստեղ նույնպես, այն բոլոր գիտակությունները, որոնք արկել են հավերի ճռւտերի կերակրումը նկարագրելիս՝ սպիտակուցների, վիտամինների, հանքային նյութերի աճող օրգանիզմի վրա թողնող ազդեցության մասին, պետք է հիշել և հնդկահավերի ու ջրային թռչունների ճռւտերին կերակրելիս:

Այդ տեսակետից կերաբաժնում, որպես վիտամիններ պարունակող կեր, պետք է նախատեսնել կանաչ, վիտամինային խոտ, կամ գաղար, կենդանական ծաղում ունեցող սպիտակուցային կերերից մոհեն, կաթնամթերքներ: Բացի այդ ամեն օր անպայման պետք է տալ հանքային նյութեր՝ սեղանի աղ, կավիճ, ալվաղ և այլն:

Հատիկավոր կերերը լավ է տալ ծլեցրած կամ դրոժացված գիճակում: Շատ փոքր ճռւտերին, կյանքի առաջին օրերին պետք

է տալ խաշած, մանրացած հատիկներ—կորեկ, ցորեն, եղիպտացորեն, մածուն, պինդ խաշած ձու:

Եթե ճուտերը չեն օգտվում արոտից, պետք է խառնել կերերի հետ կերաբաժնի 2 տոկոսի չափ ձկան յուղ և չորացրած դրոժներ:

Հնդկահավերի հաւտերի համար, մինչև 60 օրական հասակը առաջարկվում է կերերի հետեւյալ խառնուրդը.

Եղիպտացորենի,	ցորենի	կամ գալու	ալյուր	55	գրամ
Ցորենի թեփ	.	.	.	15	»
Չկան կամ մսառուլուային	ալյուր	.	.	18	»
Չորացրած եղինջի կամ երեքնուրկի	ալյուր	.	.	4,5	»
Կազիճ կամ խեցի	.	.	.	5	»
Ավաղ	.	.	.	1	»
Փայտի ածուխ	.	.	.	1	»
Սեղանի աղ	.	.	.	0,5	»

Որքան ճուտը փոքր է, այնքան նրա պահանջը կենզանական կերերի մեջ ավելի մեծ է: Հետզհետե, երկու ամսից հետո, կենզանական կերերը որպես ավելի թանգարժեք կերեր փոխարինվում են տարրեր տեսակի քուսպերով, որոնք հարուստ են սպիտակուցներով: Բացի այդ, մեծ ճուտերը ավելի շատ կարող են որսալ միջատներ և որդեր:

Վերեւում բերված կերերի խառնուրդից պետք է տալ ըստ տամնօրյակում հետեւյալ քանակությամբ:

1-ին տամնօրյակում	15 գրամ	5—տամնօրյակում	90 գրամ
2-րդ	»	25 »	6-րդ »
3-րդ	»	35 »	7-րդ »
4-րդ	»	60 »	8-րդ »

Կերերի մի մասը տրվում է թրջած վիճակում (զտած կաթով, թանով կամ ջրով շաղախած): Չոր կերը կարելի է թողնել կերամաններում, իսկ թրջած կերը չպետք է թողնել, որպեսզի չթթվի:

Բագիկների կերակրումը: Կերերի ամրող խառնուրդը բազիկներին պետք է տալ խոնավ վիճակում, բայց աշխատել միշտ այնքան գնել կերամաններում, որ կերակրումից հետո մեջը մնացըրդ չմնա:

Առաջին օրվանից մինչև 90 օրական հասակը բարիկների գամար տուածությունը են հետեւյալ կերաբաժնները.

ՄԵԿԻՑ ՄԻՆՉԵՎ ՎԱՐՍՈՒԻՆ ՕՐԱԿԱՆ ԲԱԴԻԿՆԵՐԻ
ԿԵՐԱԲԱԺՆՆԵՐԸ

ԿԵՐԵՐԻ ՄԵԽԱԿՆԵՐԸ	Բադիկների հասակը օրերով						
	1-10	11-20	21-30	31-40	41-50	51-60	61-90
Հատիկավար մանրացրած կերեր	25	65	100	140	160	170	170
Թուօպ տարբեր տեսակի	—	3	8	15	20	25	20
Զոտած կաթ (մածուն կամ շոռ)	15	15	20	—	—	—	—
Մոխ թնացորդներ (նիմած)	3	10	15	30	35	40	30
Մանրացրած կանաչ	20	30	50	70	90	120	130
Կավիճ և ուրիշ հանքային կերեր	2	3	5	8	10	12	15
Սեղանի աղ	—	—	1	1	2	2	2

Բազիկներին առաջին տասնօրյակում կերակրում են օքան 8-10 անգամ, 11-ից մինչև 60 օրական հասակը՝ 8-8 անգամ, իսկ նրանից հետո 3-4 անգամ:

Սագերի ճուտերին կարելի է կերակրել ներքենում բերվող խառնուրդով, ավելացնելով խառնուրդի քանակը ըստ հասակի, հետեւյալ կերպ՝

ԿԵՐԵՐԻ ՄԵԽԱԿՐ	Հասակ ըստ օրերի									
	1-10	11-20	21-30	31-40	41-50	51-60	61-70	71-80	81-90	121-150
Հատիկների ալյուր	15	45	100	120	130	140	120	110	100	60
Կենդանական կերեր	5	15	25	35	35	25	15	10	5	—
Արոտի իրու	40	100	250	500	700	900	1100	1200	1300	1650

Սագի ճուտերին առաջին օրերը կերակրում են օրական 8-4 անգամ, իսկ հետագայում՝ 2 անգամ:

Առաջին օրերը ալյուրի խառնուրդի հետ միասին տալիս են պինդ խաշած մանրացրած ձու:

Հնդկահավերին, որոնք պիլում են ընդհանրապես բարձր և

Հոք արտաներ, կարելի է բազմացնել ամեն տեղ, միայն հարկաւ վոր է սովորել ճիշտ խնամել ու լավ կերակրել սրանց հուտերին: Սագերը և բազերը սիրում են արածել ջրի ափին, օդուվելով արտում կանաչից և որսալով ջրի մեջ որդեր և մանր ձեկոների: Այս հանգամանքը պետք է նախատեսնել ջրային թռչունների ֆերմա կազմակերպելիս:

Մեր ուսպուրլիկայում թռչնաբուծությունը գեռ ցածր մաս կարգակի վրա է գտնվում, այնինչ կան բազմաթիվ հնարավորություններ այդ եկամտաքեր ճյուղի զարգացման համար:

Ամենից առաջ հարկավոր է թռչնաբուծական ֆերմաները ապահովել գրագետ, ձեռնհաս ու գործը սիրող կաղըերով և ծանոթացնել նրանց թռչնաբուծության տեխնիկայի հետ:

Առաջ և ճիշտ կերակրել ու լավ խնամել թռչուններին կարգավորել ձվատվության հաշվառումը, միշտ ընտրել ու բազացնել բարձր մթերատվություն ունեցող հավերին:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ե1

Ներածություն	•	•	•	•	•	2
Տնային թռչունների ծագումը	•	•	•	•	•	5
Հավերի ցեղերը	•	•	•	•	•	6
Խնջ կերեր կարելի է տալ հավերին	•	•	•	•	•	9
Կերերի նախապատրաստումը	•	•	•	•	•	16
Հավերի կերակրումը	•	•	•	•	•	15
Հավերի խնամքը	•	•	•	•	•	18
Խնկուբացիա	•	•	•	•	•	19
Ճուտերի խնամքը և կերակրումը	•	•	•	•	•	22
Թաշնանոցը և նրա կահավորումը	•	•	•	•	•	26
Քրուգերնառուզի կահավորումը	•	•	•	•	•	29
Ջրային թռչունները և հնդկահավերը	•	•	•	•	•	31
Սաղերի ցեղերը և նրանց կերակրումը	•	•	•	•	•	31
Թաղերի ցեղերը և նրանց կերակրումը	•	•	•	•	•	32
Հնդկահավերի ցեղերը և նրանց կերակրումը	•	•	•	•	•	34
Ջրային թռչունների և հնդկահավերի ճուտերի կերակրումը	•	•	•	•	•	35

Պատկի խմբագիր՝ Գ. ԶԱՔԱՐՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ՝ Մ. ԿԱՓԱՆՅԱՆ
ՄՐԲԱԳՐԻՉ՝ Ա. ԱՐՁԱՔԱՆՅԱՆ

Հանձնված է արտադրության 12/1 1948 թ., ստորագրված է տպելու 21/11
1948 թ., վ. 08176, պատվեր 30, հքատ. 504, տիրած 3000, 2¹/₂ տպագրէ
մամուչ, մեկ ժամ. 36480 տպանիշ

Հայկական ՍՍՌ ԳԱ տպարան, Երևան, Աբովյան 104

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008109

A Հ 19215

ԳՅՈՒՂԱՅՆԵՍՍԱ.ԱԱ. ՍԵՐԻԱ.ՅՈՎ.

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Գ. Թավքյան.—Քիմիական տարրեր տարրերի նշանակությունը բույսերի համար
2. Ա. Հարաւրյունյան.—Խնձորս պետք է պահել հանքային պարագաներին
3. Գ. Մարզանյան.—Գյուղատնտեսության մեջ օգտագործվող թռունավոր նյութերը
4. Ա. Սաւիսույս.՝ Զաղձը (զայտուկը) և պայքարը նրա դեմ
5. Գ. Խալարյան.՝ Թթվենու տերեց որպես չերամի կեր
6. Թ. Թադիոսյան.—Լորու մշակությունը լենինականի հարթակայրում
7. Գ. Գևակյան.՝ Ազոտական պարարանյութերը և նրանց կիրառումը
8. Ա. Մուրադյան — Հայտստանի վայրի գալֆանախշիները
9. Լ. Հ. Նրգիմյան.՝ Ազիզովիլ կաթ
10. Ա. Գ. Նրիցյան.՝ Կերերի սիլոսացումը